№ 110 ՅՈՒԼԻՍԻ 4 (16) 1878 ՅՈՒԼԻՍԻ 4 (16) № 110

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1878 Թվից

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի գիծը և պրօգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարվանը 6 րուբլ։ Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դուք ձեր պարտաւորութիւնը կատարեցիք։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Մոսկվայից։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ «Голосъ» լրագիրը հայերի մասին։ Իտալիա։ — «Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Հին մանկավարժներ։

ԴՈՒՔ ՁԵՐ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐԵՑԻՔ

Ամենքը կարդացած կը լինեն Կ. Պօլսի հայոց պատրիարքի Ն. Դրանը տուած վեհանձն պատասխանը, որ հաղորդել է մեզ հեռագիրը։

Թիւրքիայի հայոց հոգևորականութիւնը սկսում է արթնանալ, սկսում է նոր ոգի ստանալ, դառնում է ազգային ոգի ունեցող, սկսում է հասկանալ իր կոչումը և առաջնորդել ժողովուրդը իր պահանջների, իր կենսական ձըգտումների մէջ։

Թիւրքիայի հայոց հոգևորականութիւնը արժանի է դառնում ամբողջ ազգի խորին համակրութեան։

Այո, երբ Ներսէս պատրիարքը շողոքորթում էր Թիւրքաց տէրութեանը, անհոգ էր ժողովրդի կարիքների մասին, զոհում էր ազգի շահերը իր անձնական շահերի համար, — մենք նրա վրա անխնայ կերպով յարձակվում էինք։ Այժմ մենք չենք կարող չը յայտնել նրան մեր կատարեալ համակրութիւնը, ՝ մեր յարգանքը, երբ նա իր քաջ վարմունքով, իր վեհանձն պատասխանով կրկին յարուցանում է հայ մարդու հոգու մէջ հինգերորդ դարի հայոց հոգևորականութեան յիշատակը։

Աշխարհը կը յարգէ հայերին միայն այն ժամանակ, երբ ամենքը կը տեսնեն որ հայը իր կեանքի գնով պաշտպանում է իր անձը, իր պատիւը, իր ազգի իրաւունքները։

Թէև Ներսէս պատրիարքը իր հերոսական պատասխանով միմիայն իր պարտաւորութիւն է կատարել, — բայց մենք վաղուց է որ աւիթ չունենալով տեսնել որ Թիւրքիայի հայոց հոգևորականութիւնը իր պարտաւորութիւնը կատարէր, հիացած ենք սրբազան Ներսէսի պատասխանով։

Եւ բացի Ներսէսից Թիւրքիայի հայերի շրջանից այս վերջին ժամանակները հանդիսացան մի քանի այլ համակրելի, յարգելի, ազգի շահերին նուիրած, գործունեայ, անձնուէր հայ հոգևորականներ։ Խրիմեան, Խորէն Նարբէյ և Իզմիրլեան սրբազանները կենդանացրին հայոց ազգի մէջ հայոց պատմութեան հին դարերի հոգևորականների, յիշատակը, այն հոգևորականների որոնք, աշխարհական առաջնորդների, իշխանների հետ ընդհանուր գործում ձեռք ձեռքի տուած, առաջնորդում էին ազգը բոլոր ազգային շարժումներում։

Այժմ մենք էլ չունենք իշխաններ, բայց ունենք աշխարհական ինտելիգենցիա։ Թող նրանց հետ ձեռք ձեռքի տուած, մոռանալով իր նեղ, սահմանափակ, կաստային շահերը, մեր արդեան հոգևորականութիւնը գործէ յօգուտ ազգի առաջադիմութեան, — և այն ժամանակ կարելի է յուսալ ազգի բաղդաւոր ապագայի համար։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

30 յունիսի

Ընթերցողը կարող է երևակայել իրան, թէ ինչ աննկարագրելի ուրախութիւն են զգում գիմնազիայի վերջին դասատան աշակերտները, մտածելով որ քիչ ժամանակից յետոյ հասունութեան վկայականը ծոցերին, կարող են, վերջապէս, փոքր ինչ հանգիստ և ազատ շունչ առնել։ Ինչ քաղ-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

Դեռ սորանէ տասն և երկու տարի առաջ, երբ ես ութ ամեայ մանուկ էի, համաձայն հօրս հաճութեան, մայրս յանձնեց ինձ տեղիս նշանաւոր վարժուհի հայ-կաթօլիկ կնոջ մօտ կարդալու, ուր անտանելի դժուարութեամբ հարկադրվեցայ մրցել ձեռաչափ տախտակի վրա դրօշմված հայ տառերի դէմ։

Ուսումնագէտ վարժուհիս 60 ամաց կը հասնէր, որոյ հաստատութիւն ալեզարդ մազերն էին, որ բուն ճիզուիթական հոգով մանրիկ — խարդախ աչեր ունէր երկու խոր փոսերի մէջ։

Այն փոքրիկ սենեակը, ուր մենք կարդում էինք, Թաց պատերով գոմի օթաց էր, վառարանի առաջևից սաքուներով երկու հակառակ մասերի բաժանված։ Օճաղի (վառարան) ճակատին ամրացրած էր Յիսուսի խաչելութեան պատկերը, և նորա երկու կողմերը կախված էին հռոմէական մեդալներով զարդարված վարդարանները։

Ընկերները թւով 30-ի չափ, բստ մեծի մասին չափահաս օրիորդք էին կային նաև պատանիներ գրեթէ 15—16 տարեկան, որոնց ուսման վերջի սահմանը մեծ սաղմոսի աւարտելը պէտք է լինէր։

Վարժուհիս առանց երեսպաշտութեան, անկեղծութեամբ վարվում էր ամենիս հետ։ Ամենափոքր յանցանքի համար անգթաբար պատժում էր։ Այդ բաղդին ես էլ երբեմն հասնելու արժանացայ չափահաս աշակերտների հետ համահաւասար։

Այստեղ ամենայն սաստկութեամբ թագաւորում էր բերան չափելը, որ ամեն առաւօտ վարժուհիս իր փոքրիկ արկղից յայտնի գոյնզգոյն թելերը հանելով մի առ մի աշակերտների բերանները նորէն չափել կը սկսէր, եթէ նրանցից մէկի առաջվայ չափը կաւելնար, այն ժամանակ հաստատված էր որ նա տանը հայհոյանք էր արել, սուտ խօսել, են. որոյ համար ծանր պատժի էր ենթարկվում։

Յաճախ պատահում էր որ աչնան եղանակին կուղարկվէինք փողոցներից սեխի, ձմերուկի և այլ սերմեր հաւաքելու, կաթօլիկ կնոջ և նորա փոքրիկ հարսին կրծելու համար, որ արդարև, այս ծառայութիւնը ամենիս համար զգալի կերպով անտանելի և զզուելի էր։

Ոչ աւելի քան վեց ամիս կարդացած էի, սորա մօտ, երբ ծնողքս ինձ տեղափոխեցին Տէր Բ...-ի փոքրիկ վարժարանը, որ ներքնայարկ մութ և խոնաւ սենեակ էր։

Այն կոպիտ տախտակը՝ որը նախկին վարժուհուս շնորհիւ բանալով իմ առաջև ուսման ընդարձակ ասպարիզի դռները, բարձր գիտութիւն կը խոստանար, ինձանից ազատվելով ուրիշների տանջանաց առարկայ դարձաւ։

Քերականը՝ որ հայրս 15 կոպէկով գնել էր, մի աղուխի մէջ կապված (աղուխը ընծայ էր) ուսուցչիս ներկայացրի, և յետոյ նորից այբ, բեն և այլն սկսեցի սովորել։ Ամբողջ օրը երկու անգամ միայն դաս կը տրվէր։ Խստիւ պահվում էր կիրակի օրեր եկեղեցի երթալու կանոնը։ Միշտ դասերի կրկնութեան ժամանակ աշակերտներից մէկը, առաջին կարգից (սաղմոս կարդացողներից) «կարդըցէք եղբարք, եթէ ոչ ատիան հանեմ կը» խօսքերը անդադար կրկնելով՝ շրջում էր մեր առաջ։ Այս ուսումնարանը գնացածս հետեւեալ օրը, քահանան ինձանից դաս պահանջեց. «Ազնիւ Աղա..կս առաջ արի աչեմ» որ ժամանակ ինքս մտաբերելով հօրս տուած պատուէրը, զոյգ ձեռքերով բարև բռնած, ուսուցչիս դէմ ելայ, բարեսիրտ տէրտէրը անհանդիստ բնաւորութեանս տեղեակ լինելով՝ որ մի գուցէ փախչեմ, ամենայն մանկավայել քաղաքավարութեամբ հարցնել սկսեց.

«Ղուրպան, դասդ գիտես, բան...»

— Խաչ օգնեա ինձ. այբ, բեն, գիմ... անհամբերութեամբ կարդացի ես։

«Աւոր անունն ինչ է։

— Եչ է.

«Ապէս մեկմա գտիր աչեմ» դարձնելով մի քանի թերթ հագիւ թէ մի այլ «եչ» ցոյց տալ կարողացայ, որոյ համար «ապրիս ձագս» ասելով քաղցր օրհնութեամբ սուրբ մատներով զըլուխս շփեց, և ապա ուղարկեց տեղս նստելու։

Այստեղ կային գրեթէ 40-ից աւելի ամեն դասակարգի անձանց տղայք, որոնց դաստավորութեան համար, միայն քահանայի ջերմեռանդ գործունէութիւնը կը բաւականացնէր։ Սովորում էին թէև ամենաանշան վարձատրութեամբ, այն է—քերական կարդացողը ամսական հինգ կոպէկ էր վճարում, փոքր սաղմոսը 10-ը և մեծ սաղմոսը 20 կոպէկ. բայց այնու ամենայնիւ աշակերտաց հայրերը քահանայի դէմ շատ անգամ տրտունջ և գանգատ էին յարուցանում։ «Ջանմ աղբար, ֆալակը աս ինչ օրեր ցցուց մեզի, երկու ղուռուշ տուր լակոտին կարթլու հախ.... սաքսան փարա, տունը ալրի... Արզուրում լիտր պաղտատ եղ, յէռսունը փարամ հաւկիթ կուտային կը.... Ծօ, ինչի դամրչու չակիրտ տանք տահա լաւ չէ օր, համ սանիաթ սորվի կը, համտա օր աս պաշտան հինգ—տասը փարա չակիրտանըլըս կառնէ կը. սաքիմ կարդաց նրա խօչ վարդապետ էղնու չէ. կարդալը ակեար մէչլիքեար բանմ էղնիր խա՝ չինտը մեր հօգևորները խազնի տէր պիտիր էղնէին չսնա...»

Եւ արդարև, Ալէքսանդրօպօլու հասարակութիւնը հէնց ներկայումս էլ մի այլ արհամարհական հայեացք ունի դէպի ուսման արժանաւորութիւնը, ինչպէս մի ամենայետին անպէտք արհեստի վրա։ Նա այն համոզմունքին է թէ, ուսումն ունեցողը անպատճառ հոգևորական լինելու կը բռնադատվի, և թէ ուսումն ինքը ըստ ինքեան ոչ այլ ինչ է, եթէ ոչ տխպար անբարոյականութեան. «Ախչարք պիտիր փուչա կարդացողներու երեսէն ալ դիւսա էղնիր» պնդում են ծերունիք։

Քահանայի վարժարանում օրը երկու անգամ միայն հաց էինք ուտում և միշտ աւելացածը

ցրությունն ունեն նրանց համար «համալսարան» և «ուսանող» ցանկալի խօսքերը։ Այո, գիմնազիստի համար ուրանողական կեանքը իր բոլոր գեղեցկութիւններով, համալսարանը — այդ գիտութեան տաճարը իր սպասաւոր պրոֆեսսորներով—դա մի իդէալ է, որին հասնելու համար նա տարիներով տանջանքներ է կրում, աշխատում է, չարչարվում է և այդ բոլոր դժուարութիւնները, նա համբերութեամբ տանում է, անդադար ներկայացնելով աչքի առաջ մօտիկ ապագայի գեղեցիկ, փայլուն պատկերը։ Գիմնազիստը, ուսանողական կեանքի հետ ծանօթ լինելով միմիայն րօմաններից և հազար ու մի բերանացի պատմութիւններից, կազմում է այդ կեանքի վրա մի առանձին գաղափար։ «Մենք դեռ հասարակ աշակերտներ ենք,—մտածում է նա—մեր մտաւոր զարգանալու միջոցները այնքան լայն և բազմակողմանի չեն... գիմնազիայում մենք միջոց և ժամանակ չունենք, օրինակ, գրականական ժողովներ ունենալու, խօսելու այստեղ, դատելու, վիճելու, ծանօթանալու մէկը միւսի հայեացքների, համոզմունքների հետ և այսպիսով հետզհետէ լայնացնելու մեր մտաւոր հորիզոնը. երբ կը դառնանք ուսանող, այն ժամանակը ազատ կը լինենք՝ ժամանակը շատ, ուսանողներ աւելի շատ—ինչ պէտք է լինի բան ու գործներս, եթէ ոչ այն, որ աշխատենք իրագործել մեր այժմեան մտքերը, աշխատենք պատրաստել մեզնից հասարակութեան ապագայ օգտաւէտ անդամներ, հայրենիքի ցաւագէտ որդիներ... Այսպէս է մտածում գիմնազիստը։ Անցնում է ժամանակ. գիմնազիական նշանագրեստը փոխարինում է համեստ ուսանողական հագուստով։ Զանազան զգացմունքներով լիքը, առօք փառօք բազմում է նորընծայ ուսանողը լսարանի բարձր նստարանների վրա։ Պրոֆեսսորի հէնց առաջի դասախօսութենից յետոյ շատ անգամ պատահում է, որ մեր նորընծան քիթը կախ է դուրս գալիս լսարանից։ Ի՞նչ է պատճառը. պրոֆեսսորը առաջարկել է ուսանողներին իր առարկայի հետ լաւ ծանօթանալու, կամ շարադրութեան աղբիւրներ ունենալու համար կարդալ ֆրանսերէն կամ գերմաներէն գրվածքներ։ Ի՞նչ անի մեր նորընծան—նա անպատրաստ է։ Գիմնազիայում, իրաւ, նա սովորել է նոր լեզուներից մէկը, բայց վայ այն սովորելուն. մի առարկայ որ գիմնազիայում երկրորդական է համարվում, էլ ով է գժվել նրա վրա գլուխ տրաքացնի։ Աւելացրէք սրա վրա և այն հանգամանքը, որ նոր լեզուների ուսուցիչները—մի խեղճ ու բարի ֆրանսիացի կամ գերմանացի—ինչքան էլ վատ սովորի աշակերտը, պատրաստ են նրան գոնէ 3 դնելու. հէնց այդ էլ հարկաւոր է գիմնազիստին։ Նա այդպէս էլ աւարտում է գիմնազիան և «bonjour monsieur»-ից աւելի ոչինչ չիմանալով, ի հարկէ համալսարանում քիթը պէտք է կախի։

Առաջին ժամանակը մեծ եռանդով սկսում է ձեռք տալ իր գործին նոր ուսանողը. ամենից առաջ նա չինում է մի շատ լայն պրոգրամմա իր պարապմունքներին, որի մէջ մտնում է ինչ լեզու, ինչ առարկայ որ քո քէֆը կուզի. «իհարկէ—մտածում է նա—ես չը պէտք է բաւականանամ միայն մեր ֆակուլտետի պարապմունքներով՝ ազատ ժամանակը հարկաւոր է լսել նոյնպէս և ուրիշ պրոֆեսսորներին.» շատ գովելի ցանկութիւն։

Բայց անցնում է մի ժամանակ—ուսանողը նայում է պրոգրամմայի վրա, ինչպէս թուրքը խոզի մսին՝—ընդհանուր հիւանդութիւնը կըպչում է և նրան։ «Էյ՛հ, դեռ ժամանակ շատ կայ—մխիթարում է նա ինքն իրան—յետոյ կը պարապեմ»։ Նա մի կողմ է թողնում առ այժմ ամենն մի պարապմունք և շտապում է վայելելու ուսանողական կեանքի առաջին գեղեցկութիւնները։ Մի միջոցից յետոյ պրոգրամման բաւական կրճատվում է՝ մնում են միայն ամենահարկաւոր առարկաները։ Բայց ուսանողը դարձեալ մօտ չէ գալիս նրան։ Անցնում են ամիսներ նա ոչինչ չէ անում. գալիս են վերջապէս քննութիւնները, և այստեղ նա ստիպված է գիշեր ցերեկ բանտարկեալի պէս փակվել սենեակում, տանջվել ու չարչարվել։ Իսկ քննութիւններից յետոյ նրան տեսնես—կենդանի մեռեալ է։

Այսպէս գործում է ամբողջ տարին ուսանողների համար, և եթէ մարդ միտն է բերում յանկարծ իր առաջին մտածմունքները ուսանողական կեանքի վրա, ցաւօք սրտի նկատում է, թէ որքան հեռու են այդ մտածմունքները իրականութենից (дѣйствительность)։ Ուր է այն ընդհանուր ձգտումը դէպի բարձր զարգացումը, ո՞ւր են այն զարգացուցիչ միջոցները—գրականական ժողովները, որոնց վրա մտածելիս մարդու բերնի ջուրն էր գնում առաջ։ Կարծես ոչ մի ընդհանուր, բարոյական շահ չէ կապում միմեանց հետ ուսանողներին, ամեն մէկը ապրում է իր համար, իր առանձին, անձնական կեանքով, առանց հետաքրքրվելու բարոյապէս մօտաւորվել իր ընկերների հետ, առանց ցանկանալու ծանօթանալ նրանց հայեացքների, համոզմունքների հետ։ Աշխատել կուրսից կուրս փոխադրվել—ահա ուսանողի բոլոր գործունէութիւնը։ Ուրեմն ինչով է աւելի ուսանողը գիմնազիստից—համարեա ոչնչով։ Նրանում է միայն, ինչպէս երևում է, զանազանութիւնը, որ ուսանողը ազատ ժամանակ աւելի շատ ունի, երբ ուզում ես—գնա համալսարան, երբ չէ՝ անբան անգործ, ծուլութեան գերի դառած, երկար ու ձիգ մեկնվիր սենեակումդ։ Ճշմարիտ է, չը պէտք է ուրանալ որ ուսանողները ունենում են ստէպ ստէպ փոքրիկ ժողովներ, բայց ինչ նպատակով՝—քէֆի անել, (покутить), խմել երգել, թուղթ խաղալ,—ահա ինչպէս են անցկացնում գիշերները։ Սա, ճշմարիտն ասած, ամեն մէկիս ցանկալի է. սա երիտասարդութեան պահանջ է։ Չէ կարելի բոլոր ժամանակ քիթը գրքերի մէջ կոխած չորս պատի մէջ ճգնել։ Ո՞վ կարող է չը խոստովանել, որ գինու բաժակը, օրիորդը և «gaudeamus» ի սկզբանէ եղել են և կը լինեն ուսանողի անբաժան բարեկամները, բայց բոլոր ժամանակը այդ սրտակից բարեկամներին նուիրել—դա միթէ ուսանողութեան բարոյական սկիզբն է։ Չէ, չեմ կարծում։ Այսօրվայ ուսանողը ապագայում հասարակութեան անդամ է, իսկ այսպիսի կեանք վարելով՝ ամբողջ տարի քէֆի անելով և քննութիւնների ժամանակ տանջվելով—չեմ կարծում որ նա կարողանայ պատրաստ համարվել հասարակական վսեմ գործին ծառայելու։ Կան, այո, անհատներ, որոնք ճշգրտութեամբ համապատասխանում են ուսանողութեան բարձր գաղափարին. բայց մի ծաղկով գարունք չի գալ։

Մենք այստեղ, ի հարկէ, չենք գրում կրիտիկա ուսանողութեան վրա—դա դժուար խնդիր է. մենք յայտնում ենք միայն մեր անձնական տպաւորութիւնները։

Չէ կարելի չասել մի քանի խօսք մի օտարոտի երևոյթի վրա ուսանողութեան մէջ, որի վրա ինչքան մտածում ես, այնքան աւելի զարմանում ես։ Մոսկվայի համալսարանական չինութիւնը բաժանվում է երկու՝ հին և նոր։ Հին չինութիւնը ամբողջապէս պատկանում է բժշկական ֆակուլտետին, իսկ նորը մնացեալ երեքին։ Սրանից երևում է, որ բժիշկները բոլորովին բաժանված են մնացած ուսանողներից։ Չը գիտեմ այս չնչին հանգամանքին վերաբերել, թէ մի ուրիշ նշանաւոր պայմանների այն խորթ և միանգամայն զզուելի երևոյթը, որ բժիշկների և մնացած ուսանողների մէջ կայ մի ատելութիւն, մինչև անգամ թշնամական յարաբերութիւններ. այդ կարելի է նկատել ամեն մի դիպուածում։ Ապրիլի 3-ին պատահած անցքից յետոյ, երբ ուսանողները համալսարանում ժողովված կամենում էին խնդրել բեկտորին հոգս տանել իրանց դրութիւնը ապահովելու—այստեղ, չը նայելով որ գործը ընդհանուր էր, այնու ամենայնիւ պարզ երևում էր ուսանողների մէջ մի խարութիւն. «Цилиндръ, не шуми! Цилиндръ долой!—գոռում էին ամեն կողմից բժիշկները, երբ մի երկու լաւ հագնված իրաւաբաններ կամ ուրիշները կը խօսէին, կամ կուզենային մի միտք յայտնել։ Այդ ինչ կը նշանակէ, միթէ մաքուր կամ հէնց շատ գեղեցիկ հագնված ուսանողը չունի իրաւունք խօսելու, կամ չէ կարող խելացի միտք յայտնելու. պէտք է անպատճառ կարմիր շապկով ու մեծ կօշիկներով լինի, որ նրա խօսքը բանի տեղ դրվի։ Այդ ինչ անհաւասարութիւն է։ Ո՞վ է ումից աւելի կամ պակաս։ Եթէ բժիշկների թիւը շատ է, դա դեռ չէ տալիս նրանց իրաւունք ծուռ աչքով նայելու ուրիշների վրա, կամ անպատուելու նրանց, իսկ եթէ սրանք չեն ցանկանում հետևել բժիշկների փոքր ինչ նիհիլիստական հայեացքներին, այդ ընդհակառակը պատիւ է բերում նրանց։ Ոչ մի խելքը գլխին ուսանող, բացի բժիշկներից, ընդունակ չէ, օրինակ, մի այսպիսի կոպիտ քաջութիւն անելու, որ երևում է հետևեալ օրինակից։ Նոյն ապրիլի 3-ի անցքից մի քանի օր յետոյ բեկտորը պէտք է յայտնէր ուսանողներին համալսարանական խորհրդի վճիռը այդ գործի վերաբերութեամբ. առաջ նա նշանակել էր ուսանողներին ժողովվել հին չինութեան մի դահլիճում, բայց յետոյ յարմար էր համարել հրաւիրել նրանց նոր չինութիւնը, որ կից է միւսի հետ։ Բժիշկները մի սարսափելի աղմուկ բարձրացրին. «մենք չենք գնա—գոռում էին նրանք—թող վախկոտ իրաւաբանները, բթամիտ ֆիլօլօգները հետևեն բէկտորի հրաւէրին, մենք չենք գնայ»։ Բացի բժիշկներից մնացածները ժողովվեցին նոր չինութեան դահլիճներից մէկում, որտեղ բեկտորը պրոֆեսսորների հետ սպասում էին։ Վճիռը կարդալու ժամանակ, երբ բոլորեքեան ուշադրութեամբ լսում էին, յանկարծ դահլիճի դուռը բացվում է և թոկը կարածի պէս ներս է պրծնում մի ուսանող (!?) վերարկուն հագին, մեծ կօշիկներով, կուրծքը դուրս դցած—դա բժիշկների ներկայացուցիչն է։ Նա կտրում է բեկտորի խօսքը ու մօտենալով նրան յայտնում է որ բոլոր բժիշկները կոչում են նրան. բեկտորը մեղմութեամբ հասկացնում է նրան, որ նա արդէն կարդում է վճիռը, ով ցանկանում է, կարող է լսել։ Պատգամաւորը սկսում է զալմազալ անել, բայց ներկայ ուսանողները իրանց չուացնելովը կտրում են պարոնի խօսքերը։ Համալսարանի պահապանները քիչ էր մնացել վզակոթին տալով դուրս են անում բժիշկների ներկայացուցիչ դիպլօմատին։ Ամեն մի հասկացող ուսանող ի հարկէ անարգում է այդպիսի կոպիտ վայրենութիւնը. բայց, համեցէք, խօսի ինչ բժշկի հետ ուզում ես—թէկուզ հրեշտակներ վեր բեր երկնքից չես կարող համոզել նրան, որ այդ վայել չէ զարգացած մարդուն։

Հայ-ուսանողների թիւը Մոսկվայի համալսարանում բաւական շատ է։ Նոքա գլխաւորապէս Լազարեան ճեմարանի և Թիֆլիսի գիմնազիայի աշակերտներ են. բացի մատեմատիկականից հայեր ամեն ֆակուլտետում կան։ Այո, մեր հասարակութեան ապագայ զարգացած անդամների մի մասը այստեղ է...Քանի՛, քանի՛ յոյսեր են դրած նրանց վրա...Նրանց հրաւիրում է հասարակական գործունէութեան ասպարէզը՝ նրանց կոչում է մեր մանուկ, աղքատ գրականութիւնը, կոչում են մեր ուսումնարանները, մեր փոքրիկ քոյր և եղբայրները.... Արդեօք իրագործելու ենք մեզ վրա ունեցած յոյսերը, թէ ամեն մինս մեր մասնագիտութեանը նուիրվելով անուշադիր պէտք է թողնենք ազգ ու հասարակութիւնը. արդեօք բժիշկը կամ իրաւաբանը պէտք է աշխատեն իրանց կարողութեան չափ նպաստելու հասարակութեան մտաւոր զարգացման գործին, թէ արծաթի մագիկական զօրութեանը ենթարկվելով, պէտք է հետևեն իրանց անձնական, եսական շահերին. Արդեօք հայ-ֆիլօլօգը պէտք աշխատէ՞ մի կարգ ու կանոն տալու մեր լեզուին, բացատրելով գրաբար ու աշխարհաբարի դերն ու նշանակութիւնը, թէ Ցիցերոնի և Հոմէրոսի պոչից բռնած պէտք է վերափոխվի հին աշխարհը. արդեօք բանաստեղծական շնորհ ունեցողները պէտք է աշխատեն որ հայը պօէզիայի գոնէ հոտն առնի. թէ ծուլութեան

ուսուցչի գրասեղանի տակ պահված հնադարեան արկղը լեցնելով՝ աշակերտացմէ մէկը իրից կնոջ էր տանում։ Առհասարակ մեր քաղաքի ուսուցչաց մէջ (մասնաւոր բացառութեամբ) ընդունված էր և տակաւին այժմս էլ կայ, աշակերտներից զանազան իրեր մուրալ, որ և տէր Ք... չը ցանկանալով այդպիսի մի բարի սովորութեան կործանմանը առիթ դառնալ, ինքն ալ գործ դնելու ստիպված էր՝ մսավաճառի տղից միս խնդրել, գինեվաճառի որդուց գինի, կամ օղի, պատճառ բերելով իւր դստեր տարութիւնը, որից օղին միայն կարող է փրկել, եթէ առաւօտները մի մի բաժակ ընդունելու լինի, մրգաւաճառի տղից, միրգ, հարուստ անձանց տղոցմէ մին լաթեր և այլն սրանցով կառավարում էր իւր բազմամարդ գերդաստանը. կար և այն անտանելի սովորութիւնը՝ որ աշակերտները առանց ջոկողութեան ուսուցչի տան ամեն հարկաւոր ծառայութիւնք անելու պարտաւոր էին, օրինակ կնոջ բաղանիս երթալու ժամանակ, լակեանը (կոնկ) տանել, փոքրիկ երեխային ման ածել, ջուր բերել, տունը, սենեակները ավելել—իստակել, բազարից պէտք եղած ամեն առուտուրն անել և այլն։

Զարհուրելի փալխան և սեագլուխ թաթը, առաջին հնարն էր ուսումն աւանդելու, որոնք իբրեանց դերերը տակաւին նեղ փողոցներում ամենայն աջողութեամբ կատարում են։

Ինձ այստեղ մի անգամ ես պատահեցաւ «մկի հոր» մտնել վարժապետիս դիմադարձութեան առթիւ։ Նախ երեսս բաքմազով ներկեցին, լեզուիս աղ և պղպեղ ցանեցին և ապա դիս մարդաչափ մութ և խոնաւ փոս մտցնելով՝ բերանը ծանր քարով ծածկեցին, ուր արտարսուք կատարեալ ինձ խեղդում էր, մոլորված էի, անելիքս չը գիտէի, երկար չարչարվելուց յետոյ՝ անդադարաբար աղաղակել սկսայ, որով խանգարում էի տէր հօր դասատուութիւնը. ի վերջոյ երկու ժամու չափ ինձ այնտեղ թողլով՝ ճարահատեալ տեղս նստել հրամայեց։

Զը նայելով որ ուսուցիչը քահանայ էր, բայց այնու ամենայնիւ Բաքոսի ամենախոնարհ դասին էր պատկանում։ Տէր Ք..ի օրհնեալ բերանից ռամկի բարձրաստիճան հայհոյանքներ ամենայն առատութեամբ կը սողային, նաև պատուական սովորութեանց մէկն էր աշակերտաց զանազան մականուններ տալ, օրինակ. պօչ խուզող, կախեթու աղուէս, զուռկէլ, աղօթած էշ, ցամաք ձորի արջ և այլն և այլն։

Տակաւին յիշում եմ այն՝ որ սխալմամբ «Աստուած» բառը «ած» կարդացի և սորա համար արբած վարժապետիս հակառակվելով՝ ուսումնարանից կամեցայ փախչել, քահանան ինձ բռնեց և փալխայով պատժելու էր։ Ես փախայ տուն։ Չորս հատ ուժեղ աշակերտներ եկան ետևիցս ինձ վարժատուն վերադարձնելու մտադրութեամբ, բայց ուսուցչիս ջանքը, մօրս հակառակութեամբ ի դերև ելան. հետևեալ օրը հայրս ինձ կրկին քահանային յանձնեց, որտեղից «Տէր հայր, միսը քեզի ոսկորն ինձի» ասելով հեռացաւ. արդէն վճռված էր և ինձ համաձայն մեղացս և հօրս հաճութեան մերկ, ծնկաչոք աւազի վրա երեք ժամու չափ նստեցնել տուին։

Այս ուսումնարանում գրեթէ ութը ամիս կարդացած էի որ քերականը աւարտելով փոքրաղմոս ձեռքս առայ. քանի մի օրից յետոյ, երբ «խզեսցուք զկապանս նոցա են» դասս էի սովորում, աշակերտները խօսքերս կրկնելով սկսեցին ինձ քաշքշել. վարժապետս ականատես լինելով՝ ուրախութեամբ ասաց «Ծո՛ տը թողէք, հաչիմ աշիր, դուք փէչկեաշ բերելով հալհալիք էզիր, ան մնաց...զուրպանս, սապախտան փօլատմ ծիրան բէրիս կը, յիրեքնոց (15 կոպէկնոց) մահրամանա վրան... խմացար...» Ճարահատեալ հետևեալ օրը կատարեցի քահանայի անխուզելի հրամանը։

Ուսումնարան մտնելուց մի քանի ամիս յետոյ վարժատան համար ավել հարկաւորվեցաւ։ Տէր հայրը հրամայեց մեզ երկրորդ օրը ուսումնարանը ժողովուելով «խաչքարի» ձորակը ավել հաւաքելու գնալ։ Յիշում եմ, որ «հայր մերը» ասելու ժամանակ, մեզ արձակելու միջոցին երգելու և զանազան պատուէրներ տալու սովորութիւն ունէր։

Ամառվայ ջերմ օրերէն մէկն էր, յուլիս ամսու մէջ, արևի տոթը սաստիկ կը նեղէր մարդու, երբ քաղաքէն դուրս գալով երեք ժամու չափ չարունակ ճանապարհ գնացինք. լայնածաւալ կանաչալից հովիտը անցնելով «խաչ քարի» ծաղկաւէտ ձորակը մտանք, ուր նախնեաց սքանչելի ձեռագործք, հայ քաջաց մամռակալեալ գերեզմաններով շրջապատված՝ կուլային անմխիթար...։ Քիչ ժամանակից յետ աշակերտները ավել ժողովելու զանազան կողմեր տարածվել սկսան. քահանան կիսակործան եկեղեցիների մէջ, իր դեռահաս դստեր հետ նստեց հանգչելու, մեզ կէս ժամու չափ ազատ խաղալու իրաւունք տալով։

Ընկերներիս մէջ կային աւանակ ունեցողներ, որոնք մէկը միւսի քամակից մարակել սկսած էին։ Տէր հօր դունատ և նիհար երեսի վրա արդէն նշմարելի կերպով փայլում էին ուրախութեան կայծեր, կարծես չափազանց գոհ էր իր այս միջոցում ունեցած երջանիկ վիճակից, իցէ երևակայում էր իր Արտաշէսութիւնը և աչակերտք նրա (Արտաշէսի) զօրաց բազմութիւնը, յանկարծ ձայներ լսվեցան «ընկա՛... ընկա՛» բարձրացանք ամենքս, և ինչ. տափարակ քարաժայռի վրա, աւանակից ընկած էր աշակերտներից մէկը, նրա գլխի մէջ տեղից ամենայն առատութեամբ բղխում էր թարմ արիւնը, երեխան ուշաթափված էր. դաւի օգնութեամբ հազիւ թէ կարողացանք կտրել արեան հոսումը և յետոյ իրիկնադէմ ավելով բեռնաւորված՝ դէպի քաղաք ուղևորվեցինք։ Ճանապարհին սկսեց կարկուտ և անձրև գալ. քահանան իշի վրա բազմած, անիծում էր իր բաղդը։ Երեկոյին հասանք վարժատուն։ Տէր Ք... ավելները դարսելով մի անկիւնում՝ արձակեց մեզ տներս երթալու։

Աղէքսանդրօպոլ. Կ.

գերի դառած անարգանք պէտք է համարեն հայ լեզուով մուղանների հետ խօսել....

Այո, ժամանակ է գործելու, ժամանակ է մի կողմ թողնելու անձնական չահերը և հասկանալու որ կան նոյնպէս և հասարակական։ Լուսաւորված մարդը հէնց նրանով է զանազանվում ազէտից, որ հասարակական բաղդաւորութիւնը բարձր է դասում անձնականից և առաջինի մէջ գտնում է վերջինը։ Գործենք ուրեմն։ Վիկտոր Հիւգոն ասում է որ մի ազգի լուսաւորութիւնը կախված է նրա գրականութենից։ Թող ուրեմն ամեն մէկը մեզանից իր ներկայ և ապագայ գործունէութեան մի մասը նուիրէ գրականական գործին...Թող ուրեմն այսպիսով ուսանողութիւնը գիտութեան դրօշակը ձեռքին առաջնորդէ հայ-մարդուն դէպի առաջադիմութիւն և լուսաւորութիւն։

Ս. Դաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՐՕՍՏՕՎ, (Դոնի վրա) քաղաքում հրատարակվող «Донская Пчела» լրագիրը շարունակում է իր առաջնորդող յօդուածները նուիրել հայոց խնդրին։ Կրկին յայտնում ենք մեր կատարեալ համակրութիւնը այդ լրագրին նրա օգտաւէտ գործունէութեան համար։

—

ԹԻՖԼԻՍԻ Դվորցովայա փողոցի վրա գտնվող Արծրունու գալէրէան բոլորովին նոր տեսք է ստանում։ Նա մաքրվում է, ներկվում է և վերանորոգվում է։ Շուտով, երբ որ շաբաթը մի քանի անգամ չինութեան մէջ երաժշտութիւն կածի և ինչպէս իմացանք, այդտեղ մի կաֆէ էլ կը բացվի,—չինութիւնը, մենք հաւատացած ենք, նոր կեանք կը ստանայ։

—

«Մշակի» կէս տարվայ բաժանորդագրութիւնը սկսված է։ Մեր թերթի կէս տարվայ գինը 6 ռուբլ է։ Գրվել կարելի է միմիայն խմբագրատան մէջ, որ բաց է ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 9 ժամից սկսած, մինչև 1 ժամ կէսօրից յետոյ։

—

Մենք ստացանք ՇՈՒՇՈՒ հասարակութենից այդ քաղաքի հոգևոր դպրոցի գործի վերաբերութեամբ այն թղթերի պատճէնները, որոնք ուղարկվեցան թէ վեհափառ Կաթողիկոսին, թէ Սինոդին և թէ Ղարաբաղի առաջնորդին։ Մի և նոյն ժամանակ ստացանք «Մշակ» լրագրին Շուշու հասարակութեան կողմից ուղղված շնորհակալութեան թուղթը, այն բազմաթիւ յօդուածների համար որ «Մշակը» նուիրել էր Ղարաբաղի հոգևոր դպրոցին։ Այդ բոլոր թղթերը ուշադրութեամբ կարդալուց յետոյ, կը վճռենք տպագրել նրանց թէ ոչ մեր թերթի մէջ։

—

ՇՈՒՐԱՑԻՑ մեզ գրում են «պ. Բաղդան Սարգսեանին քաղաքագլուխ ընտրելու օրից մեր քաղաքը փոքր ի չատէ կանոնաւորվեց։ Փողոցները մաքրվում են, լապտերների թիւը չատացած է. ջրանցքները և աղբիւրները մաքրվում են և այլն։ Մեր քաղաքի բնակիչները չատ շնորհակալ են քաղաքապետից։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ГОЛОСЪ» ԼՐԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Голосъ» լրագրի № 171 մէջ տպված է հետևեալ առաջնորդող յօդուածը։ «Ուրբաթ, յունիսի 16/28 հայոց պատգամաւորները Բերլինի կոնգրէսում, Խորէն Նարբէյ Բեշիկտաշեան արքեպիսկոպոսը և հայոց նախկին պատրիարք Խրիմեանը ներկայացրին մեծ պետութիւնների լիազօրներին Թիւրքաց Հայաստանի օրգանական կանոնադրութեան նախագիծը «Projet de reglement organique pour l'Armenie Turque), հետևեալ երկու բացատրող գրութիւնների հետ, որոնք այդ նախագիծը հաստատում են ստատիստիկական թուանշաններով. ա. «Statistique de l'Armenie Turque» և բ. «Notice statistique sur la population de l'Armenie Turque»։ Մեր Բերլինի թղթակիցներից մէկը հաղորդեց մեզ այդ փաստաթղթերը և նրանից գլխաւորը՝ «Օրգանական կանոնադրութեան նախագիծը» տպված է «Голосъ»-ի № 170 մէջ։

«Կոնգրէսին ներկայ եղող, մանաւանդ Թիւրքաց լիազօրները երևի քիչ չէին զարմացած Թիւրքաց հայերի ներկայացրած համեստ ցանկութիւնների վրա։ Թիւրքաց Հայաստանը իր մէջքով տարաւ Փոքր-Ասիայի պատերազմական բեմի վրա եղած կռուի բոլոր ծանրութիւնը։ Նրա սահմաններում և գրեթէ միայն նրա միջոցներով պահպանում էին իրանց զօրքերը Մուխտար և Խասիյի փաշաները։ Նրա ազգաբնակութիւնը պահպանեց Թիւրքիայի համար վայրենի նոմադների հաւատարմութիւնը։ Բ. Դուռը հայերին թողնելով անպաշտպան և նրանց ենթարկեց քուրդերի, լազերի և եզիդիների կողոպտելուն և բռնաբարութիւններին։ Մեծ Հայաստանի երկիրը, որ դարերի ընթացքում հարստահարված էր Թիւրքաց կառավարութենից, պատերազմի ժամանակ սիստեմատիկաբար աւերվեցաւ Թիւրքաց կանոնաւոր զօրքերից և ամեն տեսակ բաշիբոզուկներից, որոնք Բ. Դրան էին ծառայում։ Եւ սրանից յետոյ ի՞նչ են պահանջում կոնգրէսից հայոց պատգամաւորները. նրանք չեն պահանջում անջատվել կայսերութենից, չեն պահանջում անկախութիւն, այլ միմիայն ինքնավարութիւն, որ ապահովէր բնակիչների սեփականութեան և անձնական իրաւունքները։

«Կոնգրէսի ստեղծած հարաւային Բոլգարիա նահանգի նման, որ արդէն «Արևելեան Ռումելիա» է կնքված, հայերը ցանկանում են, որ Մեծ Հայաստանի մի մասին առանձին վալիութիւն տրվի և Բ. Դուռը իրաւունք ունենայ նշանակել և հեռացնել վալիներին։

«Մինչդեռ կոնգրէսը աշխատում էր հեռացնել Թիւրքաց զօրքերին Արևելեան Ռումելիայից, հայերը սերասկերիատին թոյլ են տալիս գրաւել կանոնաւոր զօրքերով նահանգի ամրոցները և ամրացրած կէտերը (les forteresse et les places fortes)։

«Վալիի գլխաւոր խորհուրդը կը կազմվի հաւասարապէս երկու կարգի ընտրութիւններով (aux deux degres) մահմեդականներից և քրիստոնեաներից, էը նայելով, որ նոր վալիութեան մէջ քրիստոնեայ ազգաբնակութիւնը (2,062,000) երեք անգամ աւելի է մահմեդական ազգաբնակութենից (650,000)։ Այդ բաւական չէ. հայերը մինչև այժմ թէպէտ շատ հարկեր էին վճարում, բայց Թիւրքիայի գանձարանը անկարգութեան պատճառով քիչ էր ստանում, մինչդեռ «Կանոնադրութեան նախագծի» համեմատ վալիութեան մուտքերի 20% (20 pour 100 des revenus géneraux de la province) իւրաքանչիւր տարի կը մտնի կայսերական ֆինանսների մինիստրութեան գանձարանը։ Այդ 20% աւելի բարձր կը լինեն, քան թէ մինչև այժմ Փոքր-Ասիայի բոլոր հայ սանջակներից ստացված մուտքը, եթէ վալիութիւնը լաւ, գլխաւորապէս ազնիւ կերպով կառավարվի։

«Ի՞նչով են արտայայտվում հայերի ցանկացած ինքնավարութեան ձևերը։

«Վալի, որ կունենայ կատարող իշխանութիւն և կենտրոնական վարչական խորհուրդ (conseil administratif central), նահանգապետներ սանջակներում և փոխնահանգապետներ կազաներում։ Եարիաթի դատաստանի պահպանելը և հասարակ ու հաշտարար դատարանների կազմակերպելը, որոնք կը դատեն եւրոպական իրաւասութեան համեմատ օրէնքներով։ Ժանդարմների զօրաբաժնի և 4000 մարդուց բաղկացած զործող միլիցիա կազմակերպելը, ընտրողական սկզբունքի գործադրութիւնը և դաւանութեան կատարեալ ազատութիւնը և սրանք են հայոց ցանկութիւնների էութիւնը, որոնք արտայայտված են Թիւրքաց Հայաստանի օրգանական կանոնադրութեան նախագծի մէջ։

«Դժուար է ի հարկ եցանկանալ աւելի պակաս, մանաւանդ այնպիսի ժողովրդի համար, ինչպէս հայերն են, որոնք իրաւունք ունեն պահանջել աւելի շատ։ Բ. Դուռը, որ Սան-Ստէֆանոյի դաշնագրի XVI յօդ. համեմատ պարտաւոր է «հայաբնակ տեղերում իրագործել տեղական պահանջների համեմատ ռէֆորմներ և պաշտպանել հայերին քուրդերի և չէրքէզների դէմ», «Կանոնադրութեան նախագծի» մէջ կը գտնի իր ամենալաւ օգնականը մի և նոյն ժամանակ «ռէֆորմները իրագործելու» ծախսերից և աշխատանքներից կազատվի և ձեռք կը բերի իր առաջ պատահական փոփոխութիւններին ենթարկվող բիւդժեի համար եկամուտի հաստատ աղբիւր։ Ռուսաստանը, որ մերկացրեց իր սուրը Թիւրքիահպատակ քրիստոնեաների ազատութեան համար, ի հարկէ պատրաստ է պաշտպանել Թիւրքաց հայերի այս համեստ ցանկութիւնները կոնգրէսում, եթէ այդպիսի պաշտպանութիւն հարկաւոր լինի։

«Մենք այդ չենք կարծում։ Միթէ Գերմանիան, Իտալիան և Ֆրանսիան կը լինեն հայերի այս համեստ ցանկութիւնների դէմ ձայն բարձրացնողները։ Ոչ, եթէ այս մասին պէտք է խօսել, ուրեմն խօսքը բրիտանական լիազօրների մասին պէտք է լինի։

«Հայերի և Հայաստանի մասին Անգլիայում տարօրինակ կարծիք է կազմվել։ Զէմս Բրայս կարծում է,որ Հայաստանը ոչ թէ երկիր է, այլ աշխարհագրական տերմին, որ նա չունի ոչ բնական սահմաններ, ոչ ցեղական միութիւն, իսկ Հէնրի Բուլինսոն չէ կասկածում, որ Հայաստանում ինքնավարութիւնը անկարելի է։

«Հայերի ինքնավարութեան համար ունեցած ընդունակութիւնների մասին տէօրետիկական դատողութիւնները ոչինչ միտք չունեն. «հողի վրա ձուկն էլ չէ կարող լողալ» ասում է պարսկական առածը, բայց փաստերի իմանալը պարտաւորեցուցիչ է։ «Թիւրքաց Հայաստանի օրգանական կանոնադրութեան նախագիծը» սկզբից որոշում է նոր վալիութիւնը, որի մէջ մտնում են ամբողջութեամբ Երզրումի, Վանի, Արղանի սանջակները և Կարպուտեան և Սղերտեան սանջակների մասերը։ «Նախագծի» հետ տուած առանձին գրութեան մէջ ցոյց են տուած մեծ Հայաստանի այնպիսի բնական առանձնայատկութիւններ, որոնք Թիւրքերին չէին թոյլ տալիս բնակվել նրա մէջ և այդպիսով «պահպանեցին իր հարազատ զաւակների համար։ Ինչ կը վերաբերի ցեղական միութեանը ակներև է, որ Զէմս Բրայս չունէր տեղեկութիւններ, երբ արտասանում էր իր դատավճիռը. նոր վալիութեան 2,062,000 մարդ բնակիչների ընդհանուր թիւից 1,330,000 հայեր են, 530,000 Թիւրքեր, 120,000 քուրդեր և 82,300 յոյներ, ասորիք, լազեր, եզիդիներ և այլ նոմադ ժողովուրդներ։ Այսպիսի թուանշաններ ի նկատի ունենալով չէ կարելի չընդունել հայոց ցեղը, իբրև տիրապետող տարր մեծ Հայաստանի Թիւրքաց մասում։»

ԻՏԱԼԻԱ

«Independance Belge» լրագրին գրում են որ Իտալիայի արտաքին գործերի մինիստր պ. Կօրտի, առաջ քան թէ Բերլին գընալը, հասկացրել է Բիսմարկ իշխանին որ եթէ միայն օսմանեան կայսրութեան նոր սահմանադրութիւնը կը կանոնաւորվի պահպանողական հիմունքների վրա և Սան-Ստէֆանոյի դաշնագրի ընդունելի մասը կը վաւերացվի կոնգրէսի մէջ, Իտալիան պատրաստ է գործակցել միւս պետութիւններին. բայց եթէ այնպիսի որոշումներ կը լինեն որոնց համեմատ օսմանեան կայսրութիւնը իր հողերից մի մաս կը տայ այլ պետութիւններին, այդ ժամանակ անկարելի կը լինի որ Հռոմի կաբինէտն էլ փոխարինութիւններ չը պահանջէ, մանաւանդ եթէ Աւստրօ-Ունգարիան օգուտ կը քաղէ Թիւրքիայում լինելու փոփոխութիւններից։ Թէպէտ վաղուց արդէն յայտնի է Իտալիայի այդպիսի նպատակներ ունենալը, այնու ամենայնիւ, պ. Կօրտին իր այս նկատողութիւնը հաղորդել է կոմս Անդրաշիին, կոնգրէսի բացվելուց մի քանի օր առաջ։ Այս պատճառով է որ Աւստրօ-Ունգարիան նայում է այժմ Իտալիային ցուրտ, զգոյշ և անվստահ կերպով։ Իտալական ժողովրդի մէջ սկսվել են ցոյցեր լինել և պահանջում են որ Տրէնտը որ Տիրոլի մայրաքաղաքն է և Տրիէստը միանան Իտալիայի հետ։ Իտալիայում երևացած այդ շարժումները արձագանք են գտնում նոյն իսկ Տրէնտի և Տրիէստի ժողովրդի մէջ։ Արդեօք կաջողվի՞ Իտալիային օգտվել ռուս-Թիւրքական պատերազմից, ինչպէս որ օգուտ քաղեց աւստրօ-պրուսական և Ֆրանկօ-գերմանական պատերազմներից և ստացաւ Վենետիկը և Հռոմ։ Իտալական ծագումից եղող այն նահանգները որոնք իտալական ազգային շէնքի մասը չեն, ի հարկէ Իտալիան չէ կարող պահանջել նրանց սիստեմատիկաբար և յամառ. հաստատամտութեամբ. բայց դիպլոմատիան փորձ կը փորձի ստանալ այդ քաղաքները խաղաղական միջոցներով, եթէ Աւստրօ-Ունգարիան արևելեան խնդրից այնչափ մեծ օգուտներ քաղէ որ արժէ փոխարինել Իտալիային։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յուլիսի 1-ին կատարված տիրաժը ներքին 5% առաջին փոխառութեան

№ սերիի	№ տոմսակի	Տարած գումար
16,711	6	200,000
14,653	12	75,000
12,005	44	40,000
11,498	33	25 000
5,765	15	10,000
111,290	36	10,000
18,487	43	10,000
22,317	46	
16 746	46	
3	22	
1,958	24	
17.360	15	
19.875	21	
7.446	29	500 ր.
5,886	16	
8.166	38	
7.639	43	
13 277	14	
7,541	26	
18,282	50	
637	14	
17,632	3	
7.698	10	
5,394	26	
12.452	37	
18,906	49	
11,538	40	
3,169	37	
16.554	48	
7,241	13	
5.718	10	100 ր.
3,106	40	
13.906	9	
1,159	43	
3,060	39	
751	29	
2,905	40	
12,465	34	
14,997	6	
8,500	50	

ԲԵՐԼԻՆ, 29 յունիսի (11 յուլիսի)։ Կոնգրէսի այսօրվայ նիստի ժամանակ խաղաղական դաշնագրի ընթերցանութիւնը վերջացաւ։ Շաբաթ օրը նշանակած է դաշնագիրը ստորագրելու և կոնգրէսը փակելու համար։ Լիազօրները մնադիր են դուրս գալ Բերլինից մասամբ շաբաթ, մասամբ կիրակի օրը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ր. 25 կ., երկրորդ 96 1/8 ր., երրորդ 96 ր., չորրորդ 96 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 244 ր., աբևելեան 95 ր., ոսկին 7 ր. 78 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,56 պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 218 մարկ, Փարիզի վրա 260 ֆրանկ։ Տրամադրութիւնը թոյլ է։ Կէրօսինը 350։

ԼՈՆԴՈՆ, 30 յունիսի (12 յուլիսի)։ Լարնակից հաղորդում են, «Երէկ Բերինգ և Սալի-փաշա անգլիական և Թիւրքաց ներկայացուցիչները ընդհանուր ոգևորութեամբ հրատարակեցին Կիպրոսի անգլիական տիրապետութեան տակ մտնելը։

Կ. ՊՕԼԻՍ, 30 յունիսի (12 յուլիսի)։ Ցոյն վաճառականները վրդովված են Անգլիայի արբանեակներից, նոքա հրաժարվեցին մասնակցել այստեղի անգլիական առևտրական դասի կողմից առաջարկած բանկէտին (ճաշկերոյթին)։

ՓԱՐԻԶ, 30 յունիսի (12 յուլիսի)։ Կալեդոնիայում բնիկները սպանեցին 89 սպիտակներին։

ԲԵՐԼԻՆ, 1/13 յուլիսի։ Այսօր կայացաւ կոնգրէսի վերջին նիստը։ Խաղաղական դաշնագիրը ստորագրած է։ Դաշնագիրը բաղկանում է 58 յօդուածներից։ Անդրաշի շնորհակալութիւն յայտնեց Բիսմարկին մեծ գործը վերջացնելու նորա արած ծառայութեան համար։ Կոնգրէսը փակվեցաւ Բիսմարկի պատասխանով։ Լիազօրները ճանապարհ են ընկնում։ Ռումինիա և Սերբիա ազատված են Բ. Դրանը պատերազմական վարձատրութիւն տալուց։

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են ՍՊԻՏԱԿ ԲՈՒՄԱԶԷՑԱՇ կինուորականների չորերի համար արշինը 1 ր. և բարձր, ՈՒԻՆՍԻ չորերի համար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 կ., ՓՕՇԻՆԵՐ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ և ԽԻՆԱՑԻ ԲԱԼԶԱՄԵՆ (իւղ) 1¼ ր., ՍԱՊՕՆ 10 կ. և բարձր, ՑԻՏՐԱԴ մանեցի 1½ ր., ԲԻՍԿՎԻՏՆԵՐ 1 ր., և բարձր, ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ր., երկաթեայ մահճակալներ 5 ր. և բարձր, սղոցներ 50 կ. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆՆԵՐ դիւժինը 3 ր., ԳՐԻԶՆԵՐ արզը 15 կ. և բարձր, ԸԷՎՕԼՎԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 ասեղ 80 կոպէկ, արական ԹԱՄԲԵՐ 40 ր. և բարձր. ԻԳԱԿԱՆՆԵՐ 70 ր. և բարձր, ծա կոցներ, մակնատօշներ, երեխաների չորեր 4 ր. և բարձր, հիանալի վերարկուներ 12 ր. և աւելի, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ 2 ր., կողպէքներ և պօղնօսներ 10 կ. և բարձր, րօմ, կոնեակ, պօրտ-վէյն, խերես և անգլիական օղի 1½ ր., ՊԱՆԻՐ չեսաեր 60 կ. և բարձր. Շուտով կը լինի լաւ թէյ 1 ր. ֆունտը։

9—20

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են՝ ԿԱՐԲՈԼԵԱՆ հեղուկ և փոշի տարափոխիկ հիւանդութիւնների դէմ 1½ ր., ԽԻՆԱՑԻ ԻՒՂ 1¼ ր., ցեղատ մագնեզիայի 2 ր., ԲՕՄ, ԿՕՆԻԱԿ, ՊՕՐՏՎԷՅՆ, ԽԷՐԷՍ և անգլիական օղի 1½ ր., ճանապարհի ամաններ դիւժինը 3 ր., թէյի գդալներ (չէն սեանում) 1½ բուբլ և բարձր, ճանապարհի դանակներ 80 կ., ճանապարհի ֆիլիտրներ 4 կ., մատիտներ հատը 1 կոպ., երկաթի գրիչներ 18 հատը 5 կ., ասեղներ 1000 հատը 80 կ., ծածկոցներ, մանկական շորեր և չը թրջվող վերարկուներ 4 բուբլ և բարձր, գլխարկներ և ժիլետներ 75 կ. և բարձր, կտաւ 10 ր. և բարձր, արիկո 1 ր. և բարձր, ՊԱՐՈՒՍԻՆ 60 կ. և բարձր, բամպէլի 1 ր. արշինը, շղթաներ (Աբիսինիայի ոսկուց) 50 կ. մինչև 3 ր.։ Մի և նոյն խանութում շուտով կը ստացվեն ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր. և բարձր, բիսկվիտներ, մեծ ֆիլտրներ և ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ անուանված մի դեղ, և այլն։

17—20

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է քաղաքի բնակիչներին, որ գնահատական հարկի 1875 թ. երկրորդ կէսի պակասորդների հաւաքելը Դումայի վճռի համեմատ յանձնած է նահանգական քարտուղար Ալէքսանդր Միխայլովիչ Զաբարովին։ Քաղաքային վարչութիւնը հրաւիրում է կալուածատէրերին, որոնք պէտք է վճարեն պակասորդներ, յանձնեն փողը Զաբարովին և նրանից տպած ապահովագիրներ ստանան։ Հակառակ դէպքում պ. Զաբարովին իրաւունք է տուած անկանոն հարկատուների հետ վարվել քաղաքային կանոնադր. 131 յօդ. համեմատ։ Թիֆլիսի գլխաւոր պ. Պոլեցմէյստերին յայտնած է, որ նա գործակցէ պ. Զաբարովին հարկաւոր դէպքում։ Այն կալուածների ցուցակը, որոնք պէտք է պակասորդը վճարեն, պակասորդների քանակութիւնը իւրաքանչիւր կալուածից և տուգանքները վարչութեան անդամի ստորագրութեամբ յանձնված են պ. Զաբարովին։ Պ. Զաբարովի փողերը կընդունի իր դրասենեակում, որ գտնվում է քաղաքային վարչութեան տան մէջ, առաւօտեան 9—12 ժամը։ Պ. Զաբարովի բացակայութեան ժամանակ փողը կարելի է մոցնել վարչութեան դանձարանը։

3—3

Ալէքսանդրապոլու հայոց վիճակային հոգևոր և Արղութեան օրիորդաց ուսումնարաններում հարկաւոր են ուսուցիչներ յետագայ առարկաների համար. 1, ռուսաց լեզուի (երկու ուսուցիչ) 2, հայոց լեզուի (երկու ուսուցիչ) 3, Պատմութեան և Աշխարհագրութեան. 4, բնական գիտութեանց (սկզբունք) 5, Մատեմատիկայի (թուաբանութիւն, երկրաչափութիւն և սկզբունք ալգեբրայի) և 6, Արղութեան ուսումնարանի համար մի վարժուհի ձեռագործութեան նոյն և վերակացուհի։ Իւրաքանչիւր ուսուցիչ կունենայ շաբաթական մինչև 24 դաս։

Գրեթէ բոլոր առարկաների դասաւանդութիւնը պէտք է լինի երկրորդին ուսումնարանների բարձր դասաններում։ (Տղայոց ուսումնարանը բացի պատրաստականներից՝ ունի չորս դասատուն, իսկ օրիորդայը—երկու. մատդրութիւն կայ բանալ և երրորդը)։ Դասատուութիւնները պէտք է սկսվին անշուշտ օգոստոսի 15-ին։

Ցանկացող ուսուցիչներից կը խնդրվի առանց ուշացնելու յայտնել իրանց պայմանները հետևեալ հասցէով.—Александрополь. Попечительству Армянскаго Духовнаго (или Аргутинскаго Дѣвичья. о) Училища.

5—6

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՈՒՄ)

ստացվել են մեծ քանակութեամբ աշխարհագրական պիտոյքներ՝

ա. Հասարակ երկրագունտներ զանազան մեծութեան	50 կ.	մինչև	3 ր. 50 կ.
բ. Երկրագունտներ պղնձեայ կիսամիջօրէականով. .	1 ր. 20 կ.	—	5 ր. 50 կ.
գ. Երկրագ. պղնձեայ ամբողջ միջօրէականով, հասարակածով և կողմնացոյցով	9 ր.	—	20 ր. և աւելի
դ. Տէլուրի (երկիր և նորա շրջ. արեգակի շուրջ).	18 ր. և աւելի		
ե. Աշխարհագրակ. ատլասներ	55 կ.	—	5 ր.

զ. Մայր ցամաքների և Կովկասի քարտէզներ քարթանի վրա կպցրած և առանց դրան, պատմական, նրկարչական, կենդանաբանական և բուսաբանական ատլասներ, ձեռնարկներ, դասագրքեր և այլն։ Պատուէրները կատարվում են ճիշդ և արագ։

Պատրաստ է, տպագրութեան համար

«ԻՆՔՆՈՒՍՈՅՑ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ»

Հայերէն լեզուի մասն ա.

Ցորինեայ Եղիշէ վարժապետ Մեծատունեանց։

Բաժանորդ կարելի է գրվել Զ. Գրիգորեանցի գրախանութում. Բաժանորդագրութեան գինը 50 կոպէկ է, տպագրվելուց յետոյ գինը 1 բուբլի։

2—2

ՀԱՐԻՒՐ ՌՈՒԲԼ ԸՆԾԱՑ նրան, ով որ կը ցոյց տայ ԳՈՂԻՆ, որ այսօր յունիսի 28-ին գողացել է պավիլեօնից ամենքին յայտնի իմ ընտանի աղաւնի ԻՒԼԻԱՅԻՆ։

Ա. Շենինգ

СТО РУБЛЕЙ НАГРАДЫ ТОМУ, кто мнѣ укажетъ ВОРА, укравшаго сегодня 28-го іюня вечеромъ изъ павильіона ручнаго голубя, извѣстную всѣмъ ЮЛІЮ.

А. Шенингъ

3—3

ПОЛУГОДОВАЯ ПОДПИСКА

НА ГАЗЕТУ

„ОБЗОРЪ“

(СЪ 1-ГО ІЮЛЯ ПО 31-Е ДЕКАБРЯ 1878 Г.)

принимается въ конторѣ «Обзора» (Головинскій проспектъ, д. № 7), за плату 8 РУБ. СЕР. съ пересылкою или доставкою. Иногородные адресуютъ: въ Тифлисъ, въ редакцію газеты «ОБЗОРЪ». Желающіе получить подписную квитанцію прилагаютъ гербовую марку въ 5 коп.

На другіе сроки условія подписки остаются прежнія: на годъ — 15 руб., на 3 мѣсяца — 4 р. 25 к. и на мѣсяцъ — 1 р. 50 к. Желающіе подписаться на цѣлый годъ съ разсрочкою вносятъ по пяти рублей къ началу первыхъ трехъ четвертей подписнаго года.

3—3

ՑՈՒԼԻՍԻ 4. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Յուլիսի 3-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլումպերիալը)	8	30
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1550	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1310	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	67
Վենայի կուրսը ածէ 112 գլ.	121	—
Դաւրեժի բարաթը. . .	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	300	
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	8	10
» միւս տեսակը.	7	80
» չաքարաւազը.	6	20
» տրանզիտը. .	6	50
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրդը թուշի . . .	8	—
» թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	1	40
» Երևանի. . . .	—	—
Գարին.	—	90
Մոմը ընճարպի (стеар.)	13	20
Մետաքս Նուխվայ. .	180	—
Կախետիունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մոկօի. . . .	27	—
» լիվանի . . .	22	--
» մարտինկօյինը	20	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան . .	2	
Աւստրիա . . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա . . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 բուբլ։ Կանանց հիւանդութիւնների բժշկմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Ա. Անով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րօպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րօպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փօթիից . .	9. 13
Ռիօն . . .	12. 13
Միխայլովօ. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բաղուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելի կլիուչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, թունաւորեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բէյլս աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան։

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակտ կրծքային և ջղային։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Գավրոնսկիյ կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակտ վենեբական և կաշու հ. Օբրէխտ ատամնացաւեր։

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բէյլս աչքերի հ. Բակտ կրծքային և ջղային հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ԳԱՅԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՇՈՒՇԻ. Շուշու հասարակութեան ընտրվածներին։ Ստացանք ձեր ուղարկած թղթերը։ Կը տեսնենք ապելու ենք, թէ ոչ։

—ԹԻՖԼԻՍ. Ա. Գ. Տ. Դուք ասում էք որ անհամբեր սպասում էք թէ ինչպէս է վճռել կօնգրէսը հայոց խնդիրը,—մենք էլ անհամբեր սպասում ենք։ «Միջազգային ընկերութիւնը» այդ մասին ոչինչ չէ հաղորդում։

—ՂԱՐՍ. *** Ստացանք ձեր նամակը և տուեցինք չարելու։ Շուտով կը հրատարակվի։ Շարունակեցէք գրել։

—ՂԱՐՍ. Կ. Տ. Ս. Մ. Ստացանք փոստի մարկանները։ «Մշակի» համարները կուղարկենք ձեր նոր հասցէով։

Дозволено Цензурою 3 Іюня Тифлисъ 1878 г. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ